Իմ կյանքը՝ միշտ կենտրոնում

Հայ տղայի վճռական նվիրումի ուղին

Henrikh Mkhitaryan
Con Alessandro Alciato

La mia vita sempre al centro

Il viaggio di un ragazzo armeno tra determinazione e sacrificio

Հենրիխ Մխիթարյան
Ալեսանդրո Ալչատոյի հետ գործակցությամբ

Իմ կյանքը՝ միշտ կենտրոնում

Հայ տղայի վճռական նվիրումի ուղին

Թարգմանությունն իտալերենից՝
Լուսինե Շուքուրյանի
Անի Հակոբյանի

ԵՐԵՎԱՆ
2026

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578
Մ 793

Մխիթարյան Հենրիխ, Ալչատո Ալեսանդրո
Մ 793 Իմ կյանքը՝ միշտ կենտրոնում: Հայ տղայի վճռական նվիրումի ուղին / Հ. Մխիթարյան, Ա. Ալչատո.- Եր.: Newmag, 2026.- 280 էջ:

Հենրիխ Մխիթարյանը ֆուտբոլային ընտանիքից է, տաղանդն ու մասնագիտական ուղին կարծես ժառանգություն է ստացել: Ծնվել է Հայաստանում, մեծացել Ֆրանսիայում, քանի որ հայրը խաղում էր Լիգա 2-ում: Համլետ Մխիթարյանը եղել է հայկական ֆուտբոլի պատմության ամենաուժեղ հարձակվողներից: Մահացել է ուղեղի քաղցկեղից, 33 տարեկանում, երբ Հենրիխն ընդամենը 7 տարեկան էր:

Երիտասարդ Հենրիխն արժանապատվորեն շարունակեց հոր ֆուտբոլային ուղին: Թեպետ նրա մահից հետո որոշ ժամանակ չէր կարողանում մոտ գնալ գնդակին, սակայն ինքն իրեն խոստացավ հասնել այնտեղ, ուր հայրը չհասցրեց:

Ընդամենը 14 տարեկան էր, երբ մեկնեց Բրազիլիա՝ «Սան Պաուլո» ակադեմիում մարզվելու: Այնտեղ զարգացրեց խաղային տեխնիկան, յուրացրեց ֆուտբոլի նոր՝ ստեղծագործական ոճը, սովորեց նոր լեզու՝ պորտուգալերեն: Կարիերայի ընթացքում կրել է «Փյունիկի», «Մետալուրգի», «Շախտյորի», Դորտմունդի «Բորուսիայի», «Մանչեսթեր Յունայթեդի» և «Արսենալի» մարզաշապիկները: 2019-ին տեղափոխվել է Իտալիա. երեք տարի խաղացել է «Ռոմա» ակադեմիում, 2022-ի հուլիսի 2-ին պաշտոնապես միացել է Սիմոնե Ինզագիի գլխավորած «Ինտերին» և անմիջապես դարձել «Ներազուրիների» հենասյուներից:

Գիրքը հուզիչ պատմություն է որդիական կարոտի և հոր՝ Համլետ Մխիթարյանի մասին, որի վաղաժամ կորուստը խորին հետք է թողել նրա կյանքում և շարժիչ ուժ դարձել: Սա նպատակասլացության, ինքն իրեն հավատարիմ մնալու և փոփոխություն բերելու պատրաստակամության պատմություն է. ճանապարհ, որը կոգեշնչի յուրաքանչյուրին, որ հավատում է տքնության, նվիրումի և երազանքի ուժին:

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578

ISBN 978-9939-482-13-2
© Cairo, 2025 Հենրիխ Մխիթարյան, Ալեսանդրո Ալչատո, «Իմ կյանքը՝ միշտ կենտրոնում» © 2026, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

1. Լինել լավ մարդ 11
2. Գալիս եմ, պապ 17
3. Երազում էի Վենգերի մասին 24
4. Անջուր, անլույս տարիներ (բայց գնդակը՝ միշտ ոտքերիս մոտ) 32
5. Բրազիլիայում՝ Մարգարեի հետ 39
6. Կիսապաշտպան լինել չէի ուզում 48
7. Չմարսված նախաճաշ Մոուրինյուի հետ 56
8. Ամիսը՝ քսան դոլար 69
9. Ոչ մի շեղում 77
10. Մարզաբազայի «նախագահը» 84
11. Մնաս բարով, իմ լավ բարեկամ Մինո 92
12. Դորտմունդի «Բորուսիայում» (թռչող աթոռ, հետո՝ ստորագրություն) 103
13. Արարատին նայող պատուհան (որովհետև Ցեղասպանությունը չի մոռացվում) 112
14. Մեկ այլ սարսափելի կորուստ 122
15. Եվրոպական հաղթանակ՝ առանց ձեռքսեղմումի .. 131
16. Հոգեբանական խաղերի շրջանը 143
17. Վենգեր, այո՛, շնորհակալ եմ: Բաքո՛ւ, ո՛չ, շնորհակալ եմ 151
18. Daje, Մի՛կի 159
19. Հռոմի զավակ Համլետը 166

20. Մոուրինյուի վերադարձը, Աուզիլիոյի
հեռախոսազանգն ու հաղթանակը Տիրանայում . . . 176
21. Լոտիտոյի հետ հանդիպումն ու Դևի օրենքը 185
22. Դեպի Ստամբուլ. Ապիանո Ջենտիլեի
հանդերձարանի պարզաբանումները 193
23. Երկրորդ երեխաս, երկրորդ աստղս 205
24. Մութ ու անբացատրելի մի գիշեր 216
25. Հայաստանի համար, Հայաստանի հետ 229

Երախտագիտության խոսք 240
Հեղինակների մասին 244
Լուսանկարների հղումներ 247

Այս գիրքը նվիրում եմ երազող փոքրներին և աղջիկներին:
Ինչով էլ զբաղվեք, թույլ չտամք, որ դժվարությունները թևաթափ անեն ձեզ:
Ընդունեք մարտահրավերները և անխոնջ աշխատեք՝ ձեր նպատակին հասնելու համար: Ապագան նրանցն է, ովքեր հավատում են իրենց ուժերին և հոգի են դնում գործի մեջ:
Ձեր ապագայի համար ջանքեր մի խնայեք:
Ամենափոքր փորձությունն էլ կարևոր է:
Պետք է հաղթեք ձեզ պարտադրված մենամարտերում:
Այդժամ կտեսնեք, որ կհաղթեք նաև ամբողջ խաղում:

Հենրիխ

Իմ Նիկոլոյին և Ալեգրային

Ալեսանդրո

1
Լինել լավ մարդ

Լավ էր պարում։
Բոլորն ասում էին, որ ընտիր պարող է։ Պարում էր ներշնչանքով, ոչ թե մեխանիկորեն։ Խաղի երաժշտության մասնիկն էր դառնում՝ հայկական ելևէջների ու մեղմ շարժումների ներդաշնակություն։ Մեղեդի։ Ժպիտ։ Ներքին վարպետություն։ Քայլ առ քայլ։ Խաղադաշտից խաղադաշտ։ Միցաշար մրցաշարի հետևից։

Համլետ էր անունը, ինչպես Ուիլյամ Շեքսպիրի հայտնի ողբերգության հերոսին էին կոչում։ Հայաստանում տարածված անուն է։

Հայրիկս էր։ Մահացավ երեսուներեք տարեկանում, երբ ես ընդամենը յոթ տարեկան էի։ Շատ երիտասարդ էր, ես՝ նույնպես։

Լինել թե՞ չլինել, սա երբեք հարց չի եղել։ Նա եղել է։ Վերջակետ։

Եղել է սեր։

Եղել է օրինակ։

Եղել է ճիշտ ուղի։

Եղել է ամենաշլացուցիչ լույսն ամենամութ խավարում:

Եղել է պատուհանից բացվող ոգեզմայլ մի պատկեր:

Եղել է իմ կյանքի ամենախորը հույզը:

Եղել է հավերժությունը պակաս ցավագին դարձնող զգացում:

Հենց ինքն է մշտնջենավոր եղել:

Պատումների բարի, բոլորից բարի հերոսն է եղել:

Ամենանուրբ թաշկինակն է եղել, որը կարող է չորացնել արցունքի ամեն կաթիլ, նույնիսկ այն հազարավոր արցունքների, որոնք ուշացումով հոսեցին, երբ նա մեզ հետ չէր:

Սովետական մարդ է եղել:

Հայ է եղել:

Աշխարհի քաղաքացի է եղել:

Իմ աշխարհն է եղել:

Կարծ է ապրել, թեև ինձ համար՝ հավիտենապես:

Եղել է վաղորդյան զարթոնք, երբ անկախ ամեն ինչից լավ ես զգում:

Այն կարևոր մարդն է եղել, որը մի շատ կարևոր բան է ասել ինձ. *«Հենրիխ, ամենից առաջ պետք է փորձես լավ մարդ լինել: Չմոռանաս»:*

«Շատ լավ, պապ»:

Փորձում եմ ամեն օր պահել խոստումս:

Հորս մասին իմ առաջին հուշը կապված է այս մտքի հետ: Անկեղծ ասած, այլ հուշեր գրեթե չունեմ: Այս բառերը հզոր են, անգին են, թեև քիչ են: 1996-ին, յոթ տարեկանում, նայում ես շուրջդ, բացահայտում քեզ շրջապատող ամեն ինչ, բայց չես կարող շատ պատկերներ մտապահել: Ապրում ես, վայելում, խաղում այդ հուշերով, սակայն անգիտակցաբար թույլ ես տալիս, որ դրանք փախչեն: Փախչում են, բայց ամբողջովին

չեն անհետանում, և ես այսօր վայելում եմ այդ հետքերը, հուշակտորները, բեկորներն այդ պատկերների: Երեխան չի հասկանա, մեծահասակը պարտավոր է: Օր չկա, որ չմտածեմ նրա մասին: Մշուշապատ, անսպասելի փայլատակումները հստակ չեն, թեև տեսանելի ու ճանաչելի ուրվագծեր ունեն: Մեծագույն խնամքով պահպանելու գանձ, առողջ խանդով պաշտպանելու ժառանգություն:

Պարում էր հաճույքով, ֆուտբոլ էր խաղում գործի բերումով, բայց ամենից առաջ՝ որպես կիրք: Մեծ հարձակվող էր, նրա մասին միշտ այդպես են պատմել ինձ:

— Ա՛խ, Համլետն ինչպես էր պարում:

— Ա՛խ, Համլետն ինչպես էր խաղում:

Կարիերան սկսել է Երևանի «Արարատում», որի կազմում 1984 թվականին գրավեց երկրորդ տեղը ԽՍՀՄ առաջնության ռմբարկուների ցուցակում: Կարճ ժամանակ խաղացել է նաև Աբովյանի «Կոտայք» ակումբում, այնուհետև տեղափոխվել ֆրանսիական «Վալանս» ակումբ, որը հայ համայնքի թիմն էր: Մենք էլ գնացինք նրա հետ: 1989 թվականն էր, ես յոթ ամսական էի: Եվ այդ նոր քաղաքի փողոցներից մեկում է հայրս ասել այդ հիշարժան խոսքը: Կյանքիս ամենակարևոր խոսքը: Ես հենված էի մեքենայի հետևի նստարանին, նա ղեկի մոտ էր: Ուշադիր նայում էր ճանապարհին և պատկերացնում այն ուղին, որը պիտի անցնեի: Անձրևում էր, բայց, չնայած վատ տեսանելիությանը, ամեն բան տեսնում էր պարզ ու հստակ:

— *Լավ մարդ, Հենրիխ:*

Գիտեմ: Ամեն բան ճիշտ է: Ես պարտական եմ նրան, պարտական եմ նաև ինքս ինձ: Ընտանիքիս ու զավակներիս: Սա

զոհողություն չէ, այլ նվեր, որ պարգևեց ինձ: Իր վերջին նվերներից մեկը: Շուտով հիվանդացավ, 1994-1995 մրցաշրջանն էր: «Վալանսից» տեղափոխվել էր Իսի լե Մուլինոյի «Արարատ»՝ մայրաքաղաքին մոտ:

— Ուզում եմ Փարիզում ապրել:

Երջանիկ էր:

Մի օր վատ զգաց: Կարծեց, թե ուժեղ գլխացավ է, պարզվեց՝ գլխուղեղի ուռուցք է: Ախտորոշումը գույժի պես էր: Ես տեղյակ չէի. մայրս՝ Մարինան, և քույրս՝ Մոնիկան, որն ինձնից մեծ էր երեք տարի, ինձ չէին ասել: Նրանք կրել էին վշտի իմ բաժինը՝ թողնելով, որ երեխա մնամ: Մոնիկան նույնպես երեխա էր, պարզապես մի փոքր մեծ էր ինձնից: Նա նույնպես լիովին չէր գիտակցում վիճակի լրջությունը:

— Մամ, Մոնիկա, պապան որտեղ է:

Պատասխանները չեմ հիշում, հարցս հիշում եմ: Չէին կարող ինձ ասել, որ հորս հոսպիտալացրել են և մեկ տարվա մեջ երրորդ անգամ են վիրահատում: Որ հուսահատորեն փորձում էին բուժել անբուժելին, փրկել նրան: Իրականում ինձ տանում էին նրան տեսնելու, սակայն իրականությունը տեսնելու համար պետք էին բոլոր մասնիկները, որ խճանկարն ամբողջանար: Այդ մասնիկները չկային: Շատ չէի հասկանում, թե ինչ է կատարվում: Տեսնում էի, որ գլուխը կապած է, ամեն անգամ ողջագուրվում էի նրա հետ ու գալիս տուն: Գուցե հետո այդ մասին չէի էլ մտածում, մինչև հաջորդ հանդիպումը: Բժիշկներն անում էին, ինչ կարող էին. խնամում էին նրան, փորձում բուժել: Հետո մի օր մայրս որոշեց:

— Երեխեք, վերադառնում ենք Հայաստան:

Նա գիտեր, որ ապրելու քիչ ժամանակ է մնացել հորս: Նրան հնարավորություն տվեց իր վերջին պահերն անցկացնել տանը՝ Երևանում, մայրաքաղաքում՝ իրեն սիրող մարդկանցով ու առաջին հերթին՝ մորս սիրով շրջապատված: Սիրո դրսևորում էր, մաքուր, իսկական, անհուն, անշահախնդիր սիրո:

Քաղաքի կենտրոնում գտնվող մեր բնակարանը մեծ չէր: Խորհրդային Միությունն էր հորս նվիրել իր սպորտային վաստակի համար: Այն ժամանակ, մինչև Հայաստանի անկախացումը, այդպես էր: Բնակարան մտնելուն պես երևում էին նրա կարիերայի ընթացքում վաստակած գավաթներն ու մեդալները, որոնք պատի վրա էին: Ցուրաքանչյուր մրցանակ հատուկ տեղ ուներ: Գնդակը նույնպես այնտեղ էր: Այդ բնակարանը մենք այդպես էլ չվաճառեցինք, ոչ էլ որևէ մասունք տեղաշարժեցինք: Հարգանքի տուրք մատուցելու և հիշատակը վառ պահելու ձև է: Նա շատ կապված էր այդ տան հետ, մենք՝ նույնպես: Այդ շրջանում ես ու Մինիկան մորս մոր տանն էինք ապրում, որպեսզի հորս վերջին օրերի տառապանքները չտեսնենք, բայց երբեմն գնում էինք նրա մոտ: Այսօր էլ, երբ վերադառնում եմ Երևան, գնում եմ իմ սրտի այդ հանգըրվանը, իմ ամենասիրած վայրը: Ես այնտեղ լավ եմ զգում, հորս ներկայությունն եմ զգում, ահա ինչու եմ հաճախ գնում:

Քույրս ինձնից մի քիչ ավելի լավ էր հասկանում իրավիճակը: Մտքովս էլ չէր անցնում, որ այդ սարսափելի պահը մոտ է, միաժամանակ քաջ գիտակցում էի, որ հայրս լավ չէ: Տեսնում էի, որ միշտ անկողնում է, միշտ պառկած: Ու հարց էր ծագում՝ ինչո՞ւ: Պինդ գրկում էի նրան, խոսում հետը, հարցեր տալիս, որոնց չէր պատասխանում:

— Մինիկա, ինչո՞ւ պապան չի խոսում:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark